DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2314
Ապրիլ 1, 1996

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Փըրչէյս

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 20, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 3, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Գէորգ Ատուրեան
Լուիզ Եագուպեան Կարոֆալօ
Մայքըլ Կիւրոյեան
Արա Իշխանեան
Մայքըլ Փիզանի
Լօրա Շիմշիտեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Առաջնորդարանէն ղրկուած հարցաթերթիկներու էջ 9—ի վրայ ելեւմտական հաշիւներու ընդհանուր գումարը չէ արձանագրուած

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

Խաչակ Արք. Պարսամեան

ԽԱՉԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558